



53. ՎԱՆԳԵՆ ԳՅԱՆՄԱՆՉԱՅՆ

Դուք Հարությունը տասնիրեք-տասնըլորս տըրձկան տղա յա ինձնմ, հերան հորը նհըետ ապրում ար Ղարաբաղն սար տըզըհերեն մին շնում: Տըեղետ մարթիքյը միշտ քյինամ ին արան արեգերը հինձավարդ:

Մեհետ էլ էտ շնեան մին քյըրվանու նհըետ ինը հոքի էրկու ճորավ, մինգյել օխտը ծիյավ ու ուզախավ քյինամ ին, վար ունրանց հինձավարդը պեռնեն, պիրին: Տահանց նհըետ Հարություն նաև հերան հարն էլ ըն քյինամ հերանց հինձավարդը պիրիլի:

Հղըննի մթըեն ըն ինգյում: Թյարվանը վըենն ըն անում, վար ըտըեղ լհւաըցնըեն, էլլա հղե ինին, քյինան: Շուրըընեն քցում ըն, պրանվում, քոն ինձնմ:

Քշերեն կեսին էտ մըրթուցան մինը զհերթնանում ա, տըեսնում Հարությունը կա վուչ: Լոխճինին զհերթնըցնում ա, քյինամ ըն շատ շոռ կյամ, տըեսնում մին զընդադում պրանված, ըշտափած, սառած-սըրսամնած, քունավ հընցած: Զհերթնըցնում ըն, Հարությունը եր ա կենում նստում, ասում.—Այ տընըշիներ, ին՞ ինձ զհերթնըցըքի, ըրազումըն իննը լաք կորեկ ըմ շափալ, մինն ար մնացալ, վար շափըեմ, տըեռնար մին շուլզալ, եկեքյ զհերթնըցըքի, թուղեցեքյ վուշ. Էտ կորկեն հըմբարքավը մին էլ խոսկերք ըմ սոսվըերալ:

Մինգյել տրանա ետը Հարությունը նաղ ա անում, վար ըրազումն ըստուծանա ծիրանն ասած ըն ինձնմ, թա էն ա էսհինչ տըե-

զեն վանքին քշտին մին կյիրիզմաքար կա վըեղին տակըին թաղված, քյինալ պիտիս քանդիս, էտ քարը կոտրըհա, մաշին մին քյամանշան կա, տուս օնընս, ածըսեւ:

Տրանա ետը հար ու տղա ուրանց ուզախը տամ ըն քյըրվընը-վուրներին, թափշուր անում, վար ուրանց հինձավարզը ինքյ օնը-նս, պիրին: Ուրանք քյինամ ըն էտ վանքը, թա վըեղը քանդին, քարը տուս օնընս:

Վանքումը օխտը գեր ըն ինում, էտ օխտը գերին էլ մին վըր-թարեդ ա ինում: Տահանք կյամ ըն Հարությունին նաև ուրան հորը առաջը կտրում, թողում լըն, ասում ըն: — Ըստընդ վանքըին վըեղն ա, վըել մին մարթ կարել լի քանզի, քարը տուս օնըն Տահանք ասում ըն: — Ըստընդ մըհդ պարիկամ մին դեր օնըներյ թաղած, օղում ընք տուս օնըննը, տանեննը մըհեր կյիրիզմընանուցումը թա-ղըննըյ: Էտ դերերը թա՝ չէ, կարել լընք, տա ամալ կյալի պեն չի: Տահանք քյինամ ըն վըրթըրեդին կոշտը, ասում: — Մըեդ պարիկամ գերին մեյդը էրած, մոխըներն ածած ա մին բութուկու մել, տիրած քարեն ղաթումը, օղում ընք քարը տանեննը կոտրենքյ, տուս օնը-նըյ, էտ բութուկեն մոխըները մըհեր կյիրիզմընընուցումը թաղը-նըյ:

Վըրթարեդն էտ պենը քցհնմ ա վանքընն սուզը: Սուզումն էլ ասում ըն: — Մըեռալը վար ուրանցն ա, կարող ըն տանըն, հու կըկա՞րե ասե տանումիքյ: Վերը, տահանց պեց ըն թողում, վար քյինան քարը տուս օնընն, տանընն:

Տահանք քյինամ ըն վըեղը քանդում, քարը տուս օնում կոտրում, Հարությունը քյամանշան յոր ա օնում, ըսկսում շորս սի-մին յիրա ածընելն ու շորս լուզվավ երք ասընելը:

Տրանա ետը Հարությունը ճինանշվում ա, հինչ աղգու աշուղ ա կյամ տըեղեքյ, լոխնինին հախտում ա, համեա վըել մինին սազը ինքյ լի օնում:

Հարությունն էլ տըեղ շատ կենում չի: քոշում ա, քյինամ թիփլիզ, հարն էլ նհըետը, վար մին դժննամանց անուն հանած տղըն կուռանը տակընն կարե ապրեւ:

